ԱՅԵԼԻ

Գ Ի Ն Ն Է 10 Կ

ԵՐԵՔՇԱԲԹԻ ՄԱՅԻՍԻ 22-ԻՆ.

№ 25

1907 Թ.

# ԽԱԹԱ-ԲԱԼԱ




ԱՆԳԼՕ - ՌՈՒՍԱԿԱՆ ԲԱՐԵԿԱՄՈՒԹԻՒՆ.

Ռուսական Բիւրոկրատիան.— *Սիրելիս, ես այնքան գործ եմ ունեցել կողոպտիչների հետ, որ ինքս էլ վարակուել եմ նրանցից. բայց դու ուշ մի դարձնիր:*

ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

# ՀԱՅԵԼԻ

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԵՐԳԻԾԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ

Տարեկան բաժանորդները կը ստանան՝ 1) 50 № «Հայելի»: 2) 12 գեղարուեստական նկար. 3) 2 մեծադիր, 14 գոյնով տպած, (75×100 սմ.) շքեղ նկար հայկական կեանքից. 4) 1 յայտնի հայ երգիծաբանների խմբական նկար և 5) պատի տախտակ պատկերազարդ օրացոյց: Տարեկան գինը բոլոր պրեմիաներով. Թիֆլիսում՝ 4 ռուբ., գաւառ՝ 5 ռուբ., արտասահման՝ 6 ռուբ.:

Հասցէն. Тифлисъ, Редакція „Аели" Дворцовая ул. № 3. կամ Tiflis, Redaction du journal „Haeli".

Խմբագիր՝ Վ. ՊԵՏՐՈՍԵԱՆ. Հրատարակիչ՝ Բ. ՃԻՊԻՑԵԱՆ.

## ՆՈՐ ՕՐԱՑՈՅՑ
## ՄԱՅԻՍ

(Եղանակ տարափային և Սալախկանային).

21. բշ. Զրասուզութեանն ոչ ցոլացեալ «Փայլակին», որ ընդ իւր սուզեաց զնեցն «Մշակ» (կանոն՝ «մէկ խեղդւողը երբեմն էլ հետը կը տանի»):

22. գշ. Ժողովականացն սակս Տանկանայ ռամկաց և 100 բուրլեաց, նուիրեալցն 'ի Կոմսուհւոյն, զոր Տ. Զաւէնն երգեաց:

23. դշ. Սրբոց ուխտաւոր արկղիցն գինւոյ, որք ուղի անկան 'ի Պետերբուրգ 'ի պէտս օրկրանոյից (կանոն՝ «ամա, Դօդի ջան, սանթուր, խորխէ, Խորէշան, շամփուրը»):

24. եշ. Ամենայն վերակացմեացն 'ի հնչակեանս, անջատեալցն 'ի դաշնակցականս, ուրացեալցն 'ի հոգևորականս և փառասիրելոցն յամբարանացս:

25. ուր. Պանք, Ֆրէնկելեան մարտիցն, Անտոնեան վկայիցն և զիւցեալ սինօդականացն (կանոն՝ որում գնարխ-նարխ...):

26. շբ. Տօն մեծ, նուաստաւորք լէջմիածին, սեղանաստառօքն, Աստ-Դէվօ զօրավարին և աշակերտացն նորին:

27. կիր. Վերջնեան միտինգին, յորում բարբառեաց ակլորացնողն գիւղականաց Աստուածատուրն Մրգնէթեցին առ 'ի փոխանել նոցա նոցին խնկ հոգաբարձինս:

28. բշ. Կարճօրեայ ուրախութեանն յաջնացեալ՝ ծաւալեալ մէյդանին «Ասպարէզ» օրաթերթին:

29. գշ. Ընտրութեանց քաղաքային դումային յորում ճղեալ են գրգլուխս միմեանց կեղծ և արդար սօցիալիստեայք:

30. դշ. Պանք. Ապստամբ մաշտոցիցն 'ի Պարթևաց աշխարհ, կատարածից և փառաւորին Անջուծանին (կանոն՝ այստեղ և այնտեղ...):

31. եշ. Փոխումն անրաժանորդ «Զայնին» որոյ ոչ կարացեալ ինքնատպան լինել, սպանու 'ի ձեռաց ցենզորաց:

## ՈՂԲԱԽԱՌՆ ԵՐԳ ԱՊԱԳԱՅ ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Աշխարհ ամենայն. ապշած նայում է. տարածումս վրա:

Բարդը դզում եմ. բուռս հիւսում եմ. բանս գզում եմ:

Տէր-ողորմեա, տէր-ողորմեա, տէր-ողորմեա:

Գլուխս պղպծած է. դանդս ցրուած է. գրպանս լցուած է:

Դեմագոգ կանչում. գև են ինձ կարծում. դէս-դէն են փախչում:

Տէր-ողորմեա...

Եղայ շատ կայիտ, եղեռնագործ բիրտ, երբեմն էլ անմիտ:

Զորրս եմ եղել. դուլումներ մղել. դդուանք եմ եղել:

Տէր-ողորմեա...

Էսպես էր իմ հայ. էշի պէս անբան. էշխով արանդայ:

Ըմբոստ կրօնի դէմ. ընկերներիս հետ. բնարողներ եղանք:

Տէր-ողորմեա...

Թողնում եմ քնչում. թաղերի միջում. թափելու արիւն:

Ժայթքել եմ նէտ. «Ժամանակի» հետ. ժողովել փարայ:

Տէր-ողորմեա...

Իմի խելք ունիմ. խելքի մեղ չունիմ. իմ փարմանքի մէջ:

Լոկ լվլվալու. լուռալ դարելու. լողում եմ աղմում:

Տէր-ողորմեա...

Խալխին խախկելով. խմբին խար... խանութ եմ բանում:

Ծաղրում եմ զերս. ծանր է իմ բ... ծածուկ է խէրս:

Տէր-ողորմեա...

Կրիայի պէս կծկուել. կուզս գ... ընկել. կաշիս պնդացել:

Հազար որ հաղեն. հարայ-հրոց կ... չեն. հայցուկ եմ ես:

Տէր-ողորմեա...

Ձանձրացայ խալաս. ձաւար ուտե... ձուաձեղի տեղ:

Ղեկս ծռուեցաւ. դուզս ցրուեց... զողանջում եմ զուր:

Տէր-ողորմեա...

Ճարս կտրուել է. ճամբէս ծռուել... ճարփում եմ կարծես:

Մելիք Թանգարին. մեր Թօփչի-... շին. մախաթ են կոխում:

Տէր-ողորմեա...

Յայտնի է ձեզ. յոգնեցրել են մ... յամառ Խաժ-ակներ:

Նայաթ սատանայ. նախագահ դ... րին. նախրապաններին:

Տէր-ողորմեա...

Շշմացրին խալաս. շանտաժիստ ֆեր. շահագործելով:

Ոսկեայթ յարում. անրադործ դալ... նում. որսալում մարդիկ:

Տէր-ողորմեա...

Չար խուժանապետ. չփլախ խմբ... պետ. չորան վարդապետ:

Պարտական լինին. պապերի շիրմ... պաշարով փթին:

Տէր-ողորմեա...

Ջօջերի համար. ջանս դուրս եկա... ջրհաննամը նրանց գլուխ:

Ռոզգով ծեծել եմ. ռամիկ գեղջկա... հուն. ռումբով փախեցրել:

Տէր-ողորմեա...

Սաղ է դալի ինձ. սրմած ժակետկա... սրբածայր փախփախ:

Վայ իմ գլխին. վաղուց վերջացա... վազանցուկ փառքս:

Տէր-ողորմեա...

Տղեկ անցեալով. տէրտէր կրդա... Տանասի ձեռքով:

Ցեխեցի մի թիզ. ցանեցի մի բ... ցցելու շատ փիս:

Տէր-ողորմեա...

Փուփ եմ պատրաստում. փուքսի-յօ... ծունքով. փեշքաշ Արսէնիս:

Քունս տարուած է. քէփս յարու... է. քէլէխի համար:

Տէր-ողորմեա...

Օլխրադութիւն. օրէնք է արդէն... օ՛ն առաջ ընկեր:

Ֆօկուսնիկ դառնալ. Ֆլօրին տիրա... նալ. Ֆիդայի գործ է:

Տէր-ող...